

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵՎ ՓՈԽԱՌՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՏՈՒԿ
ԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ
«ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ**

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման կարգը հաստատելու մասին» և «Կանոնարկման հանձնաժողովի ձևավորման կարգը և աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ««Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-332-Ն օրենքի ընդունմամբ, որով «Լեզվի մասին» օրենքի 5-րդ հոդվածը լրացվել է թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման լիազորության իրացման համար անհրաժեշտ լիազորող նորմով:

Նախագծերի ընդունմամբ նախատեսվում է հաստատել պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ կիրառվող՝ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման կարգը, ինչպես նաև կանոնարկումն իրականացնող հանձնաժողովի ձևավորման կարգը և աշխատակարգը:

Առաջարկվող կարգավորմամբ կընդունվեն «Լեզվի մասին» օրենքով նախատեսված «Պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ

թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման կարգը հաստատելու մասին» և «Կանոնարկման հանձնաժողովի ձևավորման կարգը և աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծերը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Թեև «Լեզվի մասին» օրենքով սահմանված է պետական փաստաթղթաշրջանության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման նորմը, բայց գործող իրավակարգավորումներով կարգավորված չեն պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ կիրառվող թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման գործընթացը, ինչպես նաև այդ գործընթացն իրականացնող հանձնաժողովի ձևավորման կարգն ու աշխատակարգը: Պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկումն ապահովող իրավական մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է կանոնարկման գործընթացը կազմակերպելուն և պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ հասկացությունների և հատուկ անունների միօրինակ կիրառությունն ապահովելը: Սա հանգեցնում է նրան, որ հաղորդակցական մակարդակում հաճախ բովանդակային թյուրըմբռնումներ են առաջանում փաստաթղթերի բովանդակության լիարժեք փոխանցման հարցում:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման կարգը

հաստատելու մասին» և «Կանոնարկման հանձնաժողովի ձևավորման կարգը և աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումների ընդունմամբ կարգավորվում են պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների և հատուկ անունների կանոնարկման իրավական մեխանիզմները: Դրանք միտված են կանոնարկման գործընթացը լիարժեք կերպով իրականացնելուն:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման նպատակն է սահմանել պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ կիրառվող՝ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման գործընթացի իրականացման իրավական մեխանիզմները:

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ստեղծել պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների միօրիանկ կիրառության գործքակազմ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ: Այն թույլ կտա հաղորդակցական մակարդակում խուսափել առաջ եկող բովանդակային թյուրըմբռնումներից և իմաստային տարընթերցումներից:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված հաստատությունները և անձինք

«Պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման կարգը հաստատելու մասին» և «Կանոնարկման հանձնաժողովի ձևավորման կարգը և աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի

Հանրապետության Կառավարության որոշումների նախագծերը մշակել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտեն:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050», Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

«Պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների կանոնարկման կարգը հաստատելու մասին» և «Կանոնարկման հանձնաժողովի ձևավորման կարգը և աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումների նախագծերը բխում են.

- «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ի «Մեր ազգային արժեքները» բաժնի 3-րդ կետից, համաձայն որի՝ հայոց լեզուն և գրերը, հայ գրականությունը, ներառյալ թարգմանական գրականությունը, գիտելիքը, գիտությունը սահմանված են որպես ազգային արժեքներ: Այս համատեքստում կարևոր է լեզվական հաղորդակցության կանոնների ստանդարտացումը և համընդհանուր ճանաչումը:

- Առաջարկվող փոփոխությունները համահունչ են նաև Կառավարության՝ տարբեր ոլորտներում միասնական ստանդարտներ սահմանելու քաղաքականությանը: Մասնավորապես՝ ՀՀ Կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի N 482-Լ որոշմամբ հաստատված պետական ստանդարտացման ծրագրով սահմանված գործողություններն այնպիսին են, որ թույլ են տալիս համընդհանուր կիրառության միասնական ստանդարտներ սահմանել տարբեր ոլորտներում: Այս համատեքստում պետական փաստաթղթաշրջանության և օրենսդրության մեջ հասկացությունների և հատուկ անունների միօրինակ կիրառության ապահովումը լրացնում է միասնական ստանդարտներ սահմանելու Կառավարության քաղաքականությունը լեզվի ոլորտում: